

Արդար բնակարանային պայմաններ
հոգեկան առողջության, մտավոր կամ
զարգացման խանգարումներ ունեցող
անձանց համար.

Ուղեցույց Բնակարանային
մատակարարների համար



Այցելե՛ք www.hud.gov/fairhousing կայքը
կամ զանգահարե՛ք խտրականության
հարցերով ազգային թեժ գիծ

1-800-669-9777 կամ 1-800-877-8339 հեռախոսահամարներով
(Դաշնային տեքստային հեռախոսային ծառայություն)



Ի՞նչ պետք է իմանան բնակարանային մատակարարները

Արդար բնակարանների մասին օրենքներն արգելում են բնակարանային խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հոգեկան առողջության, մտավոր կամ զարգացման խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ: Հոգեկան առողջության, մտավոր և զարգացման խանգարումներ ունեցող անձինք բախվել են խտրականության բազմաթիվ տեսակների, այդ թվում՝ նրանցից պահանջվում է ապրել հաստատություններում և այլ առանձնացված միջավայրում: Անհապաղ անհրաժեշտ է մատչելի, ինտեգրված համայնքային բնակարանային տարբերակներ, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են ապրել առանց խտրականության: Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն ինքնուրույն ապրել համայնքում՝ իրենց անհրաժեշտ ցանկացած օժանդակությամբ, ինչպիսիք են՝ բժշկական ծառայությունները, խնամակալը կամ բնակարանի օգնականը, այլ կարճաժամկետ կամ երկարաժամկետ ծառայություններ կամ աջակցություն: Համայնքային բնակարանային հնարավորությունների հասանելիությունը նույնպես կարևոր է՝ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք ստիպված չլինեն հաստատություններում մնալ:

Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն ինքնորոշման և անկախ լինելու իրավունք: Հաշմանդամություն ունեցող որոշ անձինք կարող են որոշակի գործողությունների համար դիմել կամ օգնություն պահանջել և կարող են օգտագործել փաստաբանի, ներկայացուցչի կամ խնամակալի ծառայությունները: Նման դեպքերում, բնակարանային մատակարարները պետք է ապահովեն, որ փաստաբանները և ներկայացուցիչները պատշաճ կերպով մասնակցեն որոշումների կայացմանը: Բնակարանային մատակարարները չեն կարող հերքող կամ խտրական որոշումներ կայացնել այն մասին, թե ինչն է առավել ձեռննտու անձին:

Բնակարանային արդար օրենքները, որոնք արգելում են հաշմանդամության խտրականությունը

«Արդար բնակարանների մասին» օրենքը, Վերականգնողական օրենքի 504-րդ բաժինը և «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին» օրենքն արգելում են բնակարանային խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Այս օրենքները, ի թիվս այլ բաների, պահանջում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվեն նույն բնակարանային հնարավորությունները, որոնք տրամադրվում են հաշմանդամություն չունեցող անձանց: Նման պաշտպանության իրավունք ունեցող անձինք ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք են, որն էապես սահմանափակում է մեկ կամ մի քանի հիմնական կյանքի գործողություններ:

Որո՞նք են պաշտպանված հոգեկան առողջության, մտավոր և զարգացման խանգարումների օրինակները:

Պաշտպանված հաշմանդամությունը ներառում է (բայց չի սահմանափակվում) հոգեկան առողջությունը, հոգեբանական, մտավոր և զարգացման պայմանները, ինչպիսիք են՝ օրգանական ուղեղի սինդրոմը, դեպրեսիան, անհանգստությունը, երկբևեռ խանգարումը, հետվնասվածքային սթրեսային խանգարումը (PTSD), ուսման առանձնահատուկ խանգարումները, աուտիզմը, Դաունի համախտանիշը, գլխուղեղի տրավմատիկ վնասվածքները, ալկոհոլիզմը և թմրամոլությունը (բացի ընթացիկ, թմրամիջոցների ապօրինի օգտագործմամբ պայմանավորված կախվածությունից): **Ինչպե՞ս են սովորաբար հոգեկան առողջության, մտավոր կամ զարգացման խանգարումներ ունեցող անհատները բնակարանային խտրականության ենթարկվում:**

Անօրինական է անձանց նկատմամբ խտրականություն դնել հիմնվելով հաշմանդամության վրա՝ արդար բնակարանային օրենսդրության համաձայն: Ստորև բերված են խտրականության մի քանի օրինակներ, որոնք արգելված են արդար բնակարանային օրենսդրությամբ.

- ◆ Դիմելու գործընթացում անձի հաշմանդամություն ունենալու կամ անձի հաշմանդամության բնույթի մասին հարց տալը, բացառությամբ այն դեպքերի, երբ բնակարանային մատակարարը բոլոր դիմումատուներին հարցնում է, թե արդյոք նրանք հաշմանդամություն ունեն՝ պարզելու, թե արդյոք նրանք իրավասու են այն բնակարանների համար, որոնք մատչելի են միայն հաշմանդամություն ունեցող անձանց:
- ◆ Անձին կամ այն մարդու, ում հետ նրանք ապրում են, հաշմանդամության պատճառով տեղեկատվություն տրամադրելուց կամ մատչելի բնակարան ցույց տալուց հրաժարվելը
- ◆ Հաշմանդամության պատճառով հրաժարվել անձին տալ վարձակալելություն կամ վաճառել բնակարանը
- ◆ Մերժել բնակարանային ապահովումը, քանի որ դիմումատուն ապրում էր հաստատությունում կամ կացարանում
- ◆ Այլ պայմաններ դնելով մատչելի բնակարան վարձելու համար, ինչպիսիք են հաշմանդամության պատճառով ավելի բարձր վարձավճարը կամ երաշխիքային կանխավճար գանձելը

- ◆ Բնակարանին առնչվող այլ պայմաններ դնելն այն պատճառով, որ դիմումատուն ապրում էր հաստատությունում, օրինակ՝ պահանջելով լրացուցիչ փաստաթղթեր կամ անցկացնելով ընտրության հաստատման համար լրացուցիչ գործընթաց:
- ◆ Մերժել ողջամիտ հարմարեցումներ տրամադրել կամ թույլ տալ ողջամիտ փոփոխություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել այն անձին կամ այն մարդուն, ում հետ ապրում են, ովքեր հաշմանդամություն ունեն՝ իրենց բնակարաններից օգտվելու կամ վայելելու հավասար հնարավորություն ունենալու համար
- ◆ Հաշմանդամության պատճառով անձի սահմանափակումը բնակելի համալիրի որոշակի ստորաբաժանումներում կամ հատվածներում
- ◆ Հաշմանդամության պատճառով խստացված ստուգման չափանիշների օգտագործումը
- ◆ Խտրական գովազդ՝ հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային դիմում ներկայացնելուց հուսալքելու համար
- ◆ Հաշմանդամության պատճառով վտարել բնակչին կամ նրա հետ ապրող անձին:
- ◆ Անձի կամ նրա հետ ապրող մարդու նկատմամբ ոտնձգություն հաշմանդամության պատճառով
- ◆ Բուժման կամ դեղորայքի վերաբերյալ հարցեր տալը
- ◆ Անձերից պահանջելը, որ համաձայնվեն տեղավորվել կոլեկտիվ բնակելի տանը, որտեղ բացառապես կամ հիմնականում ապրում են նույն կամ համանման հաշմանդամություն ունեցող անձինք

Ի՞նչ թույլատրելի գործողություններ կան արդար բնակարանային օրենսդրության համաձայն:

Բնակարանային մատակարարը կարող է ստուգել դիմորդներին մատչելի բնակարան ձեռք բերելու համար և կարող է բնակիչների համար ստեղծել կանոններ կամ վարքագծի կանոնակարգեր, եթե ստուգումը, կանոններն ու վարքագծի կանոնակարգերը հավասարապես տարածվում են բոլոր մարդկանց վրա, խտրական չեն, և, եթե բնակարանային մատակարարները ողջամիտ հարմարեցումներ են տրամադրում ցանկացած քաղաքականության, պրակտիկայի, կանոնների և վարքագծի կանոնակարգի համար, երբ դրանք կարող են անհրաժեշտ լինել հաշմանդամություն ունեցող անձի համար: Բնակարանային մատակարարները չեն կարող խտրականություն դնել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ՝ վախի, կողմնակալության կամ ընդհանրացման հիման վրա:

Որո՞նք են ողջամիտ հարմարեցումները և փոփոխությունները:

Ողջամիտ հարմարեցումներն ու փոփոխությունները բնակարանի կանոնների, քաղաքականության, պրակտիկայի, ծառայությունների կամ ֆիզիկական կառուցվածքի փոփոխություններ են՝ հաշմանդամություն ունեցող անձին բնակարաններից օգտվելու և վայելելու հավասար հնարավորություն ընձեռնելու համար: HUD-ի ֆինանսավորմամբ տրամադրվող բնակարաններում բնակարանների, հանրային և ընդհանուր տարածքների կառուցվածքային փոփոխությունները կընկնեն այն ողջամիտ հարմարեցումների կատեգորիայի տակ, որոնք բնակարանային մատակարարը պետք է տրամադրի: Ողջամիտ հարմարեցումների կամ փոփոխությունների խնդրանքների մի քանի օրինակներ կարող են ներառել.

- ◆ Ծառայողական նշանակության կենդանի բերելու խնդրանք, երբ գործում է «կենդանիների արգելման» քաղաքականությունը
- ◆ Դիմում կամ այլ փաստաթղթեր լրացնելու հարցում օգնություն խնդրելը
- ◆ Բնակարանային մատակարարին խնդրել՝ թույլատրելու բնակարանային օգնականի կամ այլ օժանդակ ծառայություններ
- ◆ Դիմումների սահմանափակ ժամկետների երկարացում և կիրառման ճկուն ընթացակարգերի կամ վայրի թույլ տալը
- ◆ Վարձակալության վճարման ժամկետը փոխելու խնդրանք՝ մինչև սոցիալական ապահովության անաշխատունակության կտրոն կամ կարճաժամկետ կամ երկարաժամկետ հաշմանդամության համար վճար ստանալը
- ◆ Շարժունակության կամ զգայական կարիքների հետ կապված բնակելի կամ ընդհանուր տարածքում ֆիզիկական փոփոխություններ կատարելու խնդրանք
- ◆ Խնդրանք մնալ հերթացուցակում՝ հաշմանդամության պատճառով ժամանակին հարցումներին չպատասխանելու համար
- ◆ Լրացուցիչ ժամանակ խնդրել բնակարան տեղափոխվելու համար, երբ դիմորդը հայտնվում է հերթացուցակի սկզբում, բայց չի կարող տեղափոխվել հաշմանդամության հետ կապված պատճառով՝ բուժում կամ հոսպիտալացում
- ◆ Այլընտրանքային երաշխագրի ընդունում, օրինակ սոցիալական աշխատողի, երբ ապագա վարձակալը հոսպիտալացման պատճառով ունենում է սահմանափակ կամ ընդհանրապես չի ունենում վերջին վարձակալության կամ աշխատանքի պատմություն:

Արդար բնակարանային պայմաններ հոգեկան առողջության, մտավոր կամ զարգացման խանգարումներ ունեցող անձանց համար. Ուղեցույց բնակարանային մատակարարների համար



Ինչպիսի՞ տեղեկատվություն կարող է բնակարանային մատակարարը պահանջել հաշմանդամություն ունեցող անձից, որը ողջամիտ հարմարեցում կամ փոփոխություն է պահանջում:

Եթե հաշմանդամությունը և հարցման անհրաժեշտությունը ակնհայտ են կամ արդեն հայտնի են բնակարանային մատակարարին, մատակարարը չի կարող որևէ այլ տեղեկատվություն խնդրել: Բնակարանային մատակարարները կարող են պահանջել տեղեկատվություն, որն անհրաժեշտ է գնահատելու համար, թե արդյոք պահանջվող ողջամիտ հարմարեցումը կամ փոփոխությունը կարող է անհրաժեշտ լինել հաշմանդամության պատճառով, միայն այն դեպքում, եթե հաշմանդամությունը կամ բնակարանի, կամ փոփոխության հետ կապված՝ հաշմանդամությանը վերաբերող անհրաժեշտությունը ակնհայտ կամ հայտնի չէ բնակարանային մատակարարին: Բնակարանային մատակարարները պետք է հաշվի առնեն հարմարեցման և փոփոխման ողջամիտ հարցումները, նույնիսկ եթե հայցողը չի օգտագործում նախընտրած ձևերը կամ ընթացակարգերը: Բնակարանային մատակարարները կարող են ցանկացած պահի մասնակցել անձի հետ ինտերակտիվ գործընթացին, բայց պետք է դա անեն նախքան հայցը մերժելը:

Արդար բնակարանով ապահովվելը լավ բիզնես է: Դա նաև օրենք է:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելե՛ք www.hud.gov/fairhousing կամ կապվե՛ք Ձեր [տեղական HUD գրասենյակի](#), նահանգային կամ տեղական արդար բնակարանային կազմակերպության հետ:

Խնդրում ենք այցելել նաև հետևյալ հղումները՝ ավելին իմանալու համար.

- ◆ [Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները բնակարանային արդար օրենքների ներքո](#)
- ◆ [Բաժին 504. Հաճախակի տրվող հարցեր](#)
- ◆ [«Արդար բնակարանների մասին» օրենքի համաձայն ողջամիտ հարմարեցում](#)
- ◆ [«Արդար բնակարանների մասին» օրենքի համաձայն ողջամիտ փոփոխություններ](#)
- ◆ [«Արդար բնակարանների մասին» օրենքի համաձայն կենդանի ունենալու պահանջը գնահատելը որպես ողջամիտ հարմարեցում](#)
- ◆ [HUD-ի հայտարարությունն Օլմստեդի նպատակների իրականացման գործում բնակարանի դերի վերաբերյալ](#)